ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» մայիսի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԳԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն երգահան Սաղաթել Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովա 25 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Քաղաքաշինության,
հողօգտագործման և բնապահպանության,
բազմաբնակարան շենքերի և համատիրությունների
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ *Լ. Իգիթյան*

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԳԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում հայ ժողովրդական երգարվեստի նվիրյալներ Օֆելյա Համբարձումյանի, Ռուբեն Մաթևոսյանի, Թովմաս Պողոսյանի, երգահաններ Վլադիլեն Բալյանի, Արզաս Ոսկանյանի միջնորդությունն, ինչպես նաև բարձր գնահատականը երգահան Սաղաթել Դավթյանի թողած ստեղծագործական ժառանգության վերաբերյալ:

Տարիներ շարունակ Սաղաթել Դավթյանի ստեղծագործությունները հարստացրել են Թաթուլ Ալթունյանի անվան երգի ու պարի և հայկական ռադիոյի ժողովրդական համույթների երգացանկերը:

Նրա երգերը կատարել են հայկական ժողովրդական երգի մեծ վարպետներ՝ Հովհաննես Բաղալյանը, Վարդուհի Խաչատրյանը, Ռուբեն Մաթևոսյանը, Օֆելյա Համբարձումյանը:

Ժողովրդական երգը սիրող ունկնդիրը ջերմությամբ է հիշում Սաղաթել Դավթյանի «Յար քելե Նազու», «Իմ անուշիկ յարի ունքերը կեռ է» երգերը:

Քաղաքաշինության,
հողօգտագործման և բնապահպանության,
բազմաբնակարան շենքերի և համատիրությունների
հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Լ. Իգիթյան